



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական
և Մանկավարժական



1902 ՅՈՒԼԻՍ 10 — ԹԻԻ 25

ԼՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

ՀԱՅԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏՊԱՐԱՆԸ



ԿԱՅԻՐԱՆՄԱՆ

ՈՒՆՈՒՄ

ՅԱՆՎԱՐՄԱՆ


ՄԱՐԿԱՇԻՐԱՏՈՒՄ, ՄԱՐԿԱՇԻՐԱՏՐ, ՄԱՐԿԱՇԻՐ
ՄԱՐԿԱՇԻՐԱՏՐԱՆԻ



1902 ՅԱՆՎԱՐ 10 - ԳԻՏ 22

ՄԱՐԿԱՇԻՐԱՏՐԱՆԻ

ՀԱՅԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆԸ
ՄԱՐԿԱՇԻՐԱՏՐԱՆԻ 38 ԻՎԱՆՔԻ ՎԵՐ



ՀԱՆԴԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراکيداق —
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

10 ՅՈՒՆԻՍ 1902



ԳԹԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ որդեակ.

Այսօր ճամբուն վրայ քեզմէ ողորմութիւն խնդրող տղեկին վրայ գլխով, եւ զբոսանացդ համար ծնողացդ քեզի տուած դրամին մէկ մասն սնոր տալդ զիս շատ ուրախացուց։ Ողորմութիւնը՝ Գրիստոնէի, մանաւանդ թէ ամէն կրթուած մարդու գլխաւոր առաքինութիւններէն մէկն է։ Իսկ այսպիսի ողորմելիներուն վրայ դուժ չունենալը՝ շատ դաժան սիրտ ունենալ կը ցուցնէ։ Այն խեղճ տղան անօթի եւ գրեթէ մերկ էր։ Սիրտցաւ եւ ողորմած մարդ մը, այսպիսի արարած մը տեսած ատեն՝ անմիջապէս մտքէն կ'անցնէ թէ՛ օր մը ինքն ալ նոյն վիճակի մէջ կրնար գտնուիլ։ Եւ մէկ կողմանէ Աստուծոյ շնորհակալ պիտի ըլլայ որ զինքը այդպիսի վիճակի մը մէջ չէ՛ ձգուած։ Միւս կողմանէ ալ պիտի ջանայ նոյն բարեքներէն զրկուածներուն վիշտը՝ ձեռքէն եկածին չափ թեթեւցնել։

Մտածէ, անգամ մը սիրելիս, թէ որ դուն այն տղեկին տեղի՛ն ըլլայիր, որքա՛ն բարեքներէ ու զուարճութիւններէ զրկուած կ'ըլլայիր։ Այն ընկերներէն, որոնց հետ ճոխութեամբ կը զուրճանաս, այն սեղանէն, որուն վրայ դրուած համալամ կերակուրներէն կուտես, այն տաքուկ զգեստներէն՝ որոնք եղանակին համեմատ կը փոխես եւ այն հազար ու մէկ վայելքներէն ու խաղերէն բոլորովին զրկուած կ'ըլլայիր։



ՕՐՕՐՈՑՆԵՐՈՒ ՊԱՐԻԿԸ

Ո՛ր կ'երթայ, զուարթ ու արագ, սա սիրուն Պարիկը։ Իր ծառի սայլովը որ կը տանին զոյգ մը ամուսնեւ սպիտակ ու անբծ աղանիներու։

Ո՛ր կ'երթայ, Պարիկը զորս կը խնդրեն բոլոր մայրերն, անիկա՛ որ կ'ոսկեգունէ իրենց անուրջներն ու կ'օրհնէ օրօրոցները։

Ան կանգ կ'առնէ՛ խնդափայլ հիւզին սեմին վրայ, ուր հիւսող կինը, երգելով կը քնացնէ իր նորածինը։

Աղանիները թռած են անտառին անուշաբոյր ու մեծ ծառերուն մէջ, ու երկնակապոյտ սայլը՝ կառչած մնացած է ամպի մը ալեծուփ ծուէններուն։

Բարի Պարիկը, այժմ իջած օրրանին մօտ, ձեն առաւ գեղեցիկ մեծ տիկնոջ մը որ կը նմանի տղեկի մը կնքամօրը։ Ան՝ զանի կը դիտէ գոյովագին, քաղցր ու շնորհալի ժըպիտով մը, ու ահաւասիկ բառերը զոր՝ անոր գեղունակ բերնէն ելան, բառեր օրհնենքի ու միմունջներ որ երջանիկ մայրը կ'իսաճայն կը կրկնէ ու կ'երգէ մեղմովին։

«Օրհնեա՛լ ըլլաս, սիրելի հրեշտակ, ո՛ր օրհնեալ ըլլայ մայրդ որ քեզ սնուց իր կաթով։

«Քեզի աղուոր բաղդ մը կը բերեմ, առողջութիւնը։ Օր մը, դու մեծնաս ու գեղեցկանաս պիտի։ Թեթեւ ու ապահով քայլեր պիտի ունենաս դուն, որոնք պիտի ընթանան կեանքի ու յոյսի ուղիներուն մէջ։ Բաղուկներ ճապուկ եւ ուժեղ. որ պիտի ընեն մարդուն արգիւնքը, կուրծք մը՝ լայն ու զօրաւոր. որ պիտի շնչէ մաքուր օդը դաշտերու ու բլուրներու։

«Օրհնեա՛լ ըլլաս, սիրուն հրեշտակս, ու օրհնեալ ըլլայ մայրդ որ իր միտքը քեզ տուած է։

«Հարստութիւն մը բերեմ քեզ, ուշիմութիւնը։ Օր մը, իմաստուն ու իրաւասիտ ըլլաս պիտի դուն։ Դուն հանդարտ ու գոհ ճակատ մը ունենաս պիտի, ուր պիտի բնակին վսեմ դաղափարներ։ Կայծառ ու լուսալիլ նայուածք, ուր ճշմարտութիւնը կը ցոլանայ ինչպէս արփին՝ ահնակիտ ու վճիտ ալեակի մէջ։

«Օրհնեա՛լ ըլլաս, հրեշտակդ իմ պաշտելի, ու օրհնեալ ըլլայ մայրդ որ քեզ տուած է իր սրտին արիւնը։

«Կը բերեմ քեզի գանձ, առաքինութիւնը։ Օր մը, ապագային, արդար ու բարի պիտի ըլլաս դուն։ Դուն համարձակ ձայն եւ ուղղադատ բերան ունենաս պիտի, որոնք պիտի պահեն վստահութիւնը, վեհոգի ու սիրող սիրտ մը, բաց՝ գթութեան ու ներումի։ Ուր պիտի գայ հանգչիլ խոնջած սիրտը բարեկամիդ, եւ ապաւինիլ տխրութիւնը թշուառին»։ Այսպէս ըսաւ գեղեցիկ Տիկինը, քաղցր ու հեղաճամբոյր Պարիկը օրրաններուն։ Յետոյ, համբոյր մը

դնելով մանուկին ճակտին վրայ, աներեւոյթացաւ՝ զարմացկոտ ու գրաւուած մօրն աչերէն:

Թրգմ.

Վ. Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴՆՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործերու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

7. ԼՈՒՔԻՆ ԿԱՆԵԼ

Պզտիկ աղջիկ, քեզ դժուար կը լինի լուռ մնալ: Դու կը կարծես թէ շատ հաճելի բան է մտքէդ անցած ամէն բան դրացիներուդ պատմելը: Բայց զիցիք, որ լաւ բան մը պիտի չկրնաս բնել, եթէ լռել չգիտես: Դու պիտի նմանիս այն անտանելի ջութակներուն, որ իրենց չաղփաղփովը իրենց մօտեցողին գլուխը կը տանին:

Դասարանի մէջ ինչպէս կրնաս բան մը սովորիլ, եթէ բոլոր ժամանակը կը խօսիս: Վարժուհին լացատրութիւններէն ինչ պիտի հասկնաս, որ հազիւ կը լսես կամ բնու: Երբ քեզ հարցնեն, ինչ պիտի պատասխանես: Երբ հարկ լինի պարտականութիւն կատարել, ինչ պիտի գրես տեսարակիդ վրայ: Նոյն մանաւանդ երբ քու գալոցական տարիներդ լրանան, ինչ սովորած պիտի լինիք ու ներկայութեան աւանդուած ու կրկնուած դասերէն ոչինչ կամ գրեթէ ոչինչ:

Շատախօսութիւնը դրօսանքներու մէջ ամենէն անօգուտն է, մարդ թէ՛ իր ժամանակը կը կորսնցնէ և թէ՛ ուրիշներունը կորսնցնել կուտայ: Խօսելու մարմաջէն շատ անգամ յիմար բաներ կ'ըսենք:

8. ՅԱՐԳԱՆԲ ՂԵԱՅԻ ՎԱՐՇՈՒՔԻՆ

Փոքրիկ մը մօրը կը պատմէր իր ըրած կատակները վարժուհին հետ, որ շատ դե-

ռատի օրիորդ մ'էր. — Բայց, ըսաւ մայրը, ինձ կը թուի, աղջիկս, թէ դու գրեթէ վարժուհիդ չես յարգեր. — Ինչու պիտի յարգեմ, պատասխանեց աղջիկը, քանի որ ձերմակ չեն անոր մազերը:

Շատ աշակերտուհիներ այս աղջկան պէս կը խորհին: Կը կարծեն, թէ ծերութիւնը միայն արժանի է յարգանքի: Մինչդեռ ծերութեան մէջ չկայանար յարգանքը: Ձեր վարժուհին ինչ տարիք ալ ունենայ, յարգանքով վարուեցե՛ք անոր հետ, ձեզի ներելի չէ ո՛չ մի կատակ, ո՛չ մի անտեղի ընտանութիւն անոր նկատմամբ: Խորհեցէք, թէ անոր մէջ կը յարգէք իր պաշտօնը, իր գիտութիւնը, մանաւանդ իր անձնութիւնը դէպի ձեզ: Այս բոլոր լաւ յատկութիւնները զինք յարգելի կ'ընեն, ուստի պէտք է սրբօրէն յարգէք զայն:

Ձեր վարժուհին ձեզ համար նոյն է ինչ որ ձեր մայրը կամ մեծ քոյրը:

9. Ի՞նչ ըսել և անպակաս լինել

Իր վարժուհին դէմ անպատկառ լինելը անոր հետ ընկերոջ մը պէս ընտանութեամբ խօսիլն է, անոր հետ այնպիսի կատակները, որ դպրոցականները « խաղ » կ'անուանեն, իր փոքրիկ պակասութիւններուն վերայ խնդալ, եթէ ունի, և այդպէսով զինք նեղացնել: Անոր անմիջապէս չհնազանդիլ և մերթ այնպէս ձեռացնել, թէ զինք ոչ տեսած, ոչ իրեն ըսած և ոչ ալ նկատած էք: Անպատկառ լինել, դարձեալ կը նշանակէ թերանալ անոր նկատմամբ քաղաքութարութեան մէջ. անոր առջևէն անցնել անց ներողութիւն խնդրելու, սանդուխտ մը կամ դռնէ մ'անկէ առաջ անցնել:

Անպատկառ լինել, դարձեալ կը նշանակէ անոր պատասխան տալ անամօթարօյր, անհամբեր կերպարանաքով ուսերը վեր բարձրացնել, և կամ ուշադրութիւն չդարցնել անոր ըսածներուն:

Խորհեցէք, պզտիկ աղջիկներ, թէ այս մասին ձեզ յանդիմանելու բան մը չունի՞ք. ձեր խիղճը ձեզ չըսեր թէ շատ անդամներ թերացած էք յարգանքէ այն անձին նկատմամբ, որուն կեանքը կ'անցնի ձեզի օդ տուկար լինելով, ձեզ ուսուցանելով, ձեզ սիրելով:

10. Ե՞րբ աշակերտք կը սիրէ իր վարժունին.

Սովորաւէս յոյն փիլիսոփան աշակերտ մ'ունէր, որ յարատեւութեամբ կը հետեւէր իր բոլոր հրահանգներուն, բայց ոչ մի ռազադիմութիւն կ'ընէր: Այս երիտասարդին հայրն եկած էր փիլիսոփայէն տեղեկութիւն առնելու իր որդոյն վրայ. « տար զաւակդ, ըսաւ Սովորաւ, երբեք բան մը պիտի չկրնամ սովրեցնել իրեն, որովհետեւ զիս չսիրէր: »

Ասիկա շատ ճշմարիտ է: Դպրոցին մէջ յառաջադիմելու և հոն երջանիկ լինելու առաջին պայմանն է ուսուցիչը սիրել: Եթէ չէ՞ք սիրեր ձեր վարժունին, բնաւ մի՛ յուսաք, թէ պիտի յաջողիք:

Կ'ըսէք, թէ միշտ դիւրին չէ սիրելը. կը սխալիք: Խորհեցէ՛ք, թէ ինչ կը պարտիք անոր, խորհեցէ՛ք իր սովրեցուցածներուն կարևորութեանը վրայ, տեսէ՛ք իր կըրած նեղութիւնը ձեզ ուսուցանելու համար, դիտեցէ՛ք ձեզ հետ ունեցած համբերութիւնը, և այն ատեն պիտի սիրէք, որովհետեւ պիտի զգաք թէ արժանի է սիրուելու: Եթէ կը սիրէք ձեր վարժունին, պիտի փափաքիք անոր հաճելի լինիլ ձեր աշխատասիրութեամբ: Զեր վարժունին սէրը պիտի օգնէ ձեր պարտականութիւնը կատարելու:

11. Երախագիտութիւն ուսուցիչներու հանդէպ

Կը պատմուի, թէ Տրուս զօրապետը, որ իւր գիւղէն մեկնած էր իւրեւ պարզ զինուոր, հոն վերադարձած ժամանակ միայն մէկ փափաք մ'ունէր, այն էր գտնել իր նախկին ուսուցիչն և սրտին վրայ սեղմել: Եւ ստուգիւ գտաւ զայն, և չճանչցողներուն նիրկայացուց ըսելով: « Ահա այն մարդն, որուն կը պարսիմ ինչ որ եմ: »

Տակաւին չէ՛ք կրնար գնահատել այն մեծ ծառայութիւնը, որ ձեզ կ'ընեն ձեր ուսուցիչները ձեզ ուսուցանելով: Թերեւս վերջը դուք ալ հասկնաք, թէ անոնց խնամքին և հոգատարութեան կը պարտիք ինչ որ էք: Ամէն պարագայի մէջ, գիտութեան առաջին ծանօթութիւնները, պատուաւորութեան առաջին սկզբունքները անոր կը պարտիք,

նաև ձեզ սովրեցուցած է իմաստութիւնն ու պարկեշտութիւնը: Այս ամէնը խորին երախտագիտութիւն չե՞ն արժեր ձեր կողմէն և եթէ հնազանդութեամբ և բազմաթիւ փոքրիկ ծառայութիւններով ձեր ուսուցչին յայնքէ՛ք ձեր երասագիտութիւնը, որ շատ դիւրին է, պիտի ցուցնէք ձեր սրին ազնութիւնը, վեհանձնութիւնը և ուղղամտութիւնը:

12. Ի՞նչու համար ձեզ կը պատժեն.

Միշտ ձեր բարիքին համար է, որ ձեր վարժունին կը յանդիմանէ կամ կը պատժէ ձեզ:

Անցեալ օր Վարդունին իր պարտականութիւնը լաւ կատարած չէր և վարժունին ստիպեց կրկին ընել:

Վարդունի առանց բան մը ըսելու կրկին ըրաւ. բայց զօրանքի ժամանակ գնաց, վարժունին քով և ըսաւ: — Օրիորդ, դուք չարունակ կը կրկնէիք, թէ պէտք է չարութեան փոխարէն բարիք ընել: Արդեօք ինձ բարի՞ք ընելու համար զիս պատժեցին, որովհետեւ պարտականութիւնս լաւ չէի կատարած:

— Ըսէ ինձ, պատասխանեց վաժրունին, ինձի համար կը սովորիք:

— Ոչ, պատասխանեց Վարդունի, ինձի համար, որ ապագային ուսեալ լինիմ:

— Լաւ ուրեմն, վրայ բերաւ վաժրունին, քու բարիքիդ համար էր, որ քեզ պատժեցի: Զեզ կը յանդիմանեմ, որովհետեւ կը սիրեմ և կը փափաքիմ որ երբ մեծնաս, ուսեալ լինիս, մինչև իսկ կ'ուզեմ որ կատարեալ լինիս: Ուրեմն կը հասկնաս, թէ պարտականութիւնդ կրկին կատարել տալով, քեզ բարիք ըրի չարիքի փոխարէն, ուզեցի քեզ վարժեցնել ըրած գործդ միշտ լաւ ընել:

Զեր վարժունները այսպէս կը խորհին: Անոնց համար երբեք փափաքելի չէ ձեզ պատժել:

13. Դպրոցի մէջ բնադասութիւն:

Շատ մը փոքրիկ աղջիկներ կը խօսակցին պարտէպին մէկ անկիւնը: — Անոնցմէ մէկը միւսին կ'ըսէր. Զգիտեմ ինչո՞ւ այսօր Օրիորդը գեղեցիկ զգեստը հագած է. — Զա-

բաճճի մ'ըսաւ. Զարմացնելու համար, կամ մեր մէջ նախանձ գրգռելու համար »:


Այսպէս խօսելով, քիչ մը ծաղրական կերպարանքով վարժուհիին կը նայէին:

Քանի մը վայրկեան յետոյ երկու օրինորդներու խօսակցութիւնը լսեցին, երբ մէկը կը պատմէր, թէ նոյն առաւօտը շատ անհաճոյ բան մը պատահեր էր իրեն, առաւօտեայ զգեստին վրայ իւղ թափեր էր, այնպէս որ հակառակ կամքին ստիպուեր էր պահեստի զգեստը հագնիլ դպրոց գալու համար:

Այս որ լսեցին աղջիկներն իրարու ներքեւ նայեցան կարմրելով: Խղճահար եղան, որ քննադատեալ էին իրենց վարժուհիին, պճնասիրութեան կամ ցուցամոլութեան վերագրելով անոր զգեստ փոխելը:

Տղա՛ք, ուրիշներուն գործերը մի՛ քննադատէք, որովհետեւ միշտ չէք կրնար անոնց գործին ճշմարիտ պատճառը գիտնալ:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՅԱՐԱՊԵՏԵԱՆ



Բիրն վերեւ կաղնի մի հին
Կ'սարածէ իր լայն ոստեր,
Իսկ անոր սակ ջերմ աբելին
Այրող շողերն չեն բախանձեր:

Բունն անոր հաս կը բոլորէ
Շուփի նկար մի ընդարձակ,
Որքան հանդարտ ու յարմար է
Պատկերաւորիլ այն ծառին սակ:

Շատ քոչուներ ոստերուն մէջ
Ձերձ կ'մնան սասիկ տալէն,
Քաղցր է անոնց ոհ ել եւ հշ
Ո՛րքան սիրեք կ'հրապուրեն:

Կ'լեցնէ օդն անոյց գեղ գեղ,
Դաւաճն. ծառին վե՛ր երաժիշտ,
Պէտք է նստիլ վայել այն գեղ
Եւ կ'անհետի երբեմն իսկ վիշտ:

Եւ ի՞նչ հոն կ'ընկողմանի
Մի դեռա՛ւթ, կայտառ հովիւ,

Սեւ աչք, սեւ ունք, քաւ մազ ունի
Իսկ իր տարիք՝ տասնութ հազիւ:

Իր զուարթ դեմքն է յոգնաբեկ,
Քիտն կ'հոսի իր նակասէն,
Թմբէր կ'զգան իր աչքերն հեք,
Մինչ քոչուներն գինք կը դիտեն:

Եւ մանաւանդ այն հեշտալուր
Թռչնիկն որ հոն կը հուռդէ
Միտքին կ'սայ քոչի մ'այլուր,
Հրնուանք հոգին իր կ'ողողէ:

— « Ննջելն է լոկ վաստակիս դեղ », —

Կ'ըսէ հովիւն ինքն իրեն,

— « Արգել չկայ, ննջեմ այս տեղ. —

Թող քոչուներն փունս օրօրեն »:

— « Հօտերս իրենց տեղն ապահով,

Կարող եմ ես լինիլ հանգիստ,

Ննջեմ այս տեղ, երբ ելնէ հով

Թո՛ղ զովք դեմքս իմ լուսնիս »:

Այս բանով ծառին ներքեւ

Կ'մնանայ անհոգ, անձայն,

Իր ուսին պարկ իր բարձն իբրեւ,

Երկար ցուպն ալ պաշտպան միայն:

Ի՛նչ քաղցր է ննջն ուղիղ մարդին

Ի՛նչքան ունի փափաքողներ,

Կ'ուզէ հանգիստ սալ ձեր մտքին

Մի՛տք Ուղղութիւն, բարեկամներ:

Մ. Վ.

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

(Շարունակութիւն 24րդ քիւեն)

Ծ Ա Ղ Ի Կ


Կը տեսնէք սա գեղեցիկ և անուշահոտ վարդի ծաղիկին մէջտեղը գտնուող բարակ թելերը՝ որ դեղին մասով մը վերջաւորուած են. ասոնք ծաղիկին (Ա) առէջներն են: Առէջ մը երեք մասերէ բաղկացած է. ունի քելիկ (Բ) մը, թելիկին ծայրը կը գտնուի դեղին պզտիկ գունդ մը՝ որ կը կոչուի արսիկ. (պատ. 1) այս սրտիկները իրենց մէջ խինձ

կոչուած քանի մը պզտիկ բաժանումներ ունին՝ որոնց մէջ կը գտնուի բեղուն փոշին. դեղին մաս մը՝ որ բեղմնաւորիչ զօրութիւն



Պատ. 1

ունի: Գիտէ՞ք. տղաքներ, շատ անգամ երբ շուշանի ծաղիկ մը հոտուըտաք, քիթերնուդ վրայ դեղին հետք մը կը մնայ, ասիկայ բեղուն փոշին է. քիթերնուդ փակած՝ զոր առէջները կը ձգեն հոն: Այլ և այլ տեսակ բոյսերու ծաղիկներուն առէջներու թիւը կը փոխուի. կան ծաղիկներ՝ որ մի միայն մէկ հատ առէջ ունին, կան որ՝ երկու, երեք,



Պատ. 2

Պատ. 3

չորս ևն հատ. ուռենիին ծաղիկը միայն մէկ առէջ ունի. հիրիկինը երեք, Շահպարակինը՝ (սեհալոյ) վեց. կան ծաղիկներ ալ, որ 100ի չափ առէջներ ունին. ինչպէս խաշխաշը: Կան ծաղիկներ՝ որոնց առէջները միեւնոյն մեծութիւնը ունին. կան ուրիշներ ալ՝ ո

րոնց առէջներու մեծութիւնը կը տարբերի. քանի մը ծաղիկներու չորս առէջներէն երկուքը երկայն և երկուքը կարճ կըլլան. ուրիշներու վեց առէջներէն չորսը երկայն և երկուքը կարճ կըլլան, ինչպէս Շահպարակինը:

Ծաղիկներու կեդրոնը հաստատուած կըլլայ սեմնափակը կամ իգան՝ որ պտղաբերութեան կամ արգասաւորութեան իգական գործարանն է: Իգան երեք մասերէ բաղկացած է (պատ. 2). ձուարանը (Ա), ծիլը (Բ) և կնիքը (Գ):

Ձուարանը իգային վարի կողմը պզտիկ պարկ մըն է, շատ անգամ խորշերու բաժնուած՝ ուր կը գտնուին ձուիկները (պատ. 3) որոնք արգասաւորուելով սերմեր կըլլան:



Պատ. 4



Պատ. 5

Ձուարանէն վեր երկնցող բարակ թելը կը կոչուի ծիլ. ծիլին գազաթը կայ ուռեցք մը՝ որ կը կոչուի կնիք: Ձուիկները փոքր գեղձեր են՝ որոնք կը գտնուին ձուարանին ներքին կողերուն վրայ, և հոն կ'աճին, մինչև որ բաժնուին անկէ և զատ բոյս մը առաջ բերեն:

Ուրեմն ծաղիկի մը մասերն են. 1. Բաժակ. 2. Պսակ. 3 Առէջներ. 4 Իգան: Ասոնցմէ առաջին երկուքը երկրորդական դեր մը ունին. իսկ առէջները և իգան (երկուքն ալ արգասաւորութեան գործարաններ) անհրաժեշտ մասերն են:

Երբոր շատ մը ծաղիկներ մեր քննութեան առարկան ընենք, պիտի տեսնենք որ անոնցմէ մէկ քանին մեր յիշած բոլոր մասերը ունին, այսինքն՝ բաժակ, պսակ, և իգան. նոյնպէս պիտի տեսնենք ուրիշներ

ալ՝ որոնց մէջ այդ մասերէն ո՛րք մէկը կը պակսի. առաջին դասին վերաբերողները կը կոչուին կատարեալ ծաղիկ, ինչպէս մանիշակ, մեխակ, կասուելոս, հրանունկ (պատ. 4): Երկրորդ դասին վերաբերողները կը կոչուին անկատար ծաղիկներ. ինչպէս յակինթ (սիւմպիւլ) և մայանթէմ (պատ. 5) կոչուած ծաղիկը:

Անկատար ծաղիկները առնելով կը տես-



Պատ. 6

նենք որ, անոնց մէջ կան մէկ քանիներ՝ որ միմիայն առէջներ, այսինքն՝ պտղաբերութեան արու գործարաններ ունին. ուրիշներ ալ կան՝ որ մի միայն իգա, կամ պտղաբերութեան էգ գործարան ունին. այս տեսակները կը կոչուին միասեռ ծաղիկներ: Կան ուրիշ ծաղիկներ ալ՝ որ թէ՛ առէջներ ունին, և թէ՛ իգա. այս տեսակներն ալ կը կոչուին երկսեռ ծաղիկներ. ինչպէս են վարդի, շուշանի, ևն. ծաղիկները:

Կան ծառեր՝ որոնց ծաղիկները թէև միասին են, բայց անոնք իրենց վրայ կը կրեն զատ զատ թէ՛ միայն առէջ ունեցող ծաղիկներ, և թէ՛ միայն իգա ունեցող ծաղիկներ. ասոնք կը կոչուին միասեռ ծաղիկներ որոնց կարգին կը պատկանին Դդումբ (պատ. 6) Ընկուզենին, Կաղնին, եգիպտացորենը ևն:

Կան ուրիշ ծառեր ալ որ իրենց վրայ միայն առէջ և կամ միայն իգա ունեցող

ծաղիկներ կը կրեն. այսինքն՝ առէջաւոր ծաղիկները զատ ծառի վրայ կը գտնուին և իգայաւորներն ալ՝ զա՛տ ծառի վրայ. այս տեսակներն ալ կը կոչուին երկսեռ ծաղիկներ. ինչպէս են կանեփին, արմաւենիին, ուռենիին ևն ծաղիկները:

Սիրունիկ պզտիկ բարեկամներս, գարնան, ծաղիկներու այս քաղցր ու զովեղանակին մէջ ձեր ընկերներովը դաշտերուն մէջ կատարած պտոյտներնուդ ատեն, երբէք նշմարա՞ծ էք որ այլ և այլ բոյսերու ծաղիկները ճիւղերուն վրայ զանազան դիրքեր կ'առնեն: Սրգարե ծաղիկները ամէն



Պատ. 7



Պատ. 8

բոյսի վրայ առ հասարակ միևնոյն դիրքովը չարուած չեն, և անշուշտ ասիկա ձեր ուշադրութիւնը գրաւած ըլլալու է: Ծաղիկներու բոյսերուն վրայ հաստատուելու եղանակը կը կոչուի ծաղկակարգութիւն կամ ծաղկադրութիւն:

Կան բոյսեր՝ որոնք իւրաքանչիւր գըլխաւոր ծաղկակոթի կամ ճիւղի ծայրը մի-

այն մէկ հատ ծաղիկ կ'ունենան. ինչպէս օձադեղը⁽¹⁾ և մանիշակը: Այս տեսակ ծաղկադրութիւն մը կը կոչուի մեմաւոր ծաղկադրութիւն:

Կան բոյսեր ալ՝ որ մէկ ճիւղին կամ գլխ. ծաղկակոթին վրայ կրնան ունենալ մէկէ աւելի ծաղիկներ, ինչպէս Վարդը և մեր ճանչցած բոյսերէն շատերը. այս տեսակ ծաղկադրութիւն մըն ալ կը կոչուի հաւա-
 քական ծաղկադրութիւն:

Հաւաքական ծաղկադրութեան մէջ կըլ-
 անք որոշել երեք տեսակներ. 1. Ողկուզա-
 ձեւ 2. հասկաձեւ. 3. հովանեկաձեւ ծաղ-
 կադրութիւններ:

Առնենք ալաթահրի (հեմրի) հաղարջի
 ֆրեկի իւզիւմի (պատ. 7) կամ յակինթի
 ծաղկած ճիւղ մը. կը տեսնենք որ այս
 ճիւղերուն վրայ շարուած ծաղիկները՝ ող-
 կոյդ մը կը ձևացնեն ասոնք, և ասոնց
 պէս բոլոր ողկոյդ ձևացնող ծաղիկները կը
 վերաբերին ողկուզաձեւ ծաղկադրութեան:

Հասկաձեւ ծաղկադրութիւնը ողկուզա-
 ձեւէն մեծ տարբերութիւն մը չունի. միայն
 սա կայ որ՝ հասկաձեւներու մէջ ծաղկակոթ-
 ները կամ երկրորդական առանցքները կարճ
 ըլլալով գրեթէ գլխաւոր առանցքին կպած
 են ծաղիկները. ինչպէս են ցորենը, գարին,
 եգիպտացորենը, ճոնը (Պատ. 8):

Հովանեկաձեւ է ծաղկադրութիւն մը՝ երբ
 շատ մը ծաղկակոթեր գլխաւոր կարճ ա-
 ռանցքով մը շուրջը ժողվուած կ'ըլլան մի և
 նոյն բարձրութիւնը ունենալով, և կը կաղ-
 մեն հովանեկաձեւ մը. հովանեկաձեւ ծաղկա-
 դրութեան կը պատկանին ստեպղինը, սա-
 միթը:

Մենաւոր ծաղկադրութեան մէջ կ'որոշ-
 ուի մէկ սեռ մը, զիստկ ծաղկադրութիւն:

Գլխակ ծաղկադրութեան մէջ իւրաքան-
 չիւր գլխաւոր առանցք կամ ծաղկակոթ կը
 վերջանայ մէկ ծաղիկով մը միայն: Գլխակ
 ծաղկադրութիւնը միանիւղ է կ'ըսուի՝ երբ
 գլխաւոր ծաղկակոթը վերջաւորած է ծա-
 ղիկով մը, եւ այս ծաղկակոթէն ուրիշ մըն

(1) Օձադեղին կամ բոգին ֆրանս. է gentiane,
 Արար. ն է ֆենիկեանա. պարս. նը կիւշատ, լեռ-
 նային բոյս մըն է. ունի վարդագոյն ծաղիկներ, իր
 բոլոր մասերը, մանաւանդ արմատը խիստ լեղի են.
 Կստը համար բժշկութեան մէջ կը գործածուի իր
 արմատին փոշին:

ալ կ'երկարի նոյնպէս ծաղիկով մը վերջա-
 ւորուած, եւ որ ինքն ալ իր կարգին կրնայ
 ուրիշներուն ծնունդ տալ, բայց միշտ մէկա-
 կան: Ծաղկադրութիւնը երկնիւղ է կ'ըսուի,
 երբ գլխաւոր ծաղկակոթը՝ իր վրայ ուրիշ
 երկու ծաղկակոթեր կը կրէ (միշտ ծաղիկով
 մը վերջաւորուած) եւ որ իրենց կարգին
 կրնան ուրիշ երկուքական նոր ծաղկակոթեր
 առաջ բերել:

Յաջորդ անգամ պիտի տեսնենք թէ ծա-
 ղիկը ինչպէս պտուղի կը փոխուի եւ ինչ
 է պտուղ մը:

(Շարունակելի)

ԱՇՈՏ 8. ՊԱՁՊԱՁԱՆ



Ք Ա Ր Ա Կ Ո Փ Ի Ն Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ա.

Հայրս՝ Պընուա Լա Հիւդ կ'անուանուէր,
 մայրս, իրաւ որ չեմ գիտեր իր անունը,
 որովհետեւ տունին մէջ զինքը մայրիկ կը
 կոչէին:

Հօրեղբորդի և հօրեղբորաղջիկ, եղ-
 բայր և քոյր, հօրեղբայր և հօրաքոյր, եղ-
 բորորդի և եղբորդուստր էին այն հի ղակ-
 ներուն մէջ՝ որոնց շեղջով փլատակները և
 դէպ ի այդ հիւղակները բարձրացող կեն-
 դանեաց անոյշակ մրգաստանները դուք տե-
 սաք արդէն: Կիրճին խորը, լերան զառի-
 թափը, ցախաստանները, կենդանիներուն
 տակը և ցանկին մէջ միշտ մենք իրարմէ
 անբաժան մնացած էինք՝ երեք տանց մեր-
 ճաւոր ազգականներ:

Ամէն ոք մէյ մէկ դաշտ կ'առնէր և հա-
 ճար ու գետնախնձոր կը մշակէր՝ հետեւեալ
 տարին քաղելու յոյսով: Անասուններն կ'ա-
 ռածուէին հոն՝ ուր որ ամէնքը միասին հա-
 ւանութիւն տային, երբ շագանակենիները
 ծաղկելու եղանակը գար, էրիկ մարդիկ ու
 մանչերը՝ ծառերու վրայ կ'ելլէին, կիները
 ու աղջիկները՝ վարը կը կենային՝ շագա-
 նակները ժողվելու համար, և երեք քաղոյ-
 քի տոպրակներ կը լեցնէին առաւել կամ
 նուազ համեմատութեամբ՝ ամէն տան տղոյ
 թիւին համաձայն, ու ամէնքն ալ իրենց
 բաժինը կ'առնէին: Ահա թէ ինչպէս կ'ապ-

րէին հիւղակներուն մէջ: Երեք հօրեղրայրներէս մին՝ ընտանեաց հայր և հաւկթածախ էր, և որ հիւղակներէն ու տօնավաճառէն շագանակ կը գնէր ու կը ծախէր: Միւսը՝ յեսանիչ էր. չորս եղեւնիէ բարակ փայտերու վրայ բարձրացած իր յեսանաքարին կոթը ուսը առած՝ կը մեկնէր հունձքէն առաջ: Աշունի ու ձմեռուան ատեն՝ տուներուն առջին կ'երթար ու յոտոցներն, մանգաղներն ու դանակները կը սրէր: Յաճախորդները՝ իրեն քիչ մը ապուր կուտային որ յարդի ամբարանոցին մէջ կուտէր, ու ձիւնը հալած ժամանակ՝ իր կաշիէ քսակը մէկ քանի դրամով լեցուն կը վերադառնար: Իսկ հայրս, մեր մօր օգնելու և մեզի հագուեցնելու համար. ինծի պէս Սէն Բուէնի քարահանքէն քար հանելու կ'երթար: Ամէն իրիկուն տուն կուգար՝ մայրիկիս և միւս տղոցն հետ ճաշելու, որովհետեւ այնքան կը սիրէր իր ընտանիքը և կիներ՝ որ կ'ըսէր. « Չեմ կրնար հաւկթածախ Պաթիստին, կամ յեսանիչ Ֆրանսուային պէս ըլլալ, զի երբ քարահանքը կ'աշխատիմ և կը տեսնեմ որ կինս կրակին մէջ փայտի տըրցակներ կը նետէ և ծուխը հիւղակին տանիքէն կ'ելլէ, ժամանակը ինձ չա՛տ երկար եւ աշխարհը շատ մեծ կը թուի »: Ահ, որչափ բարի ու ազնիւ, այնչափ հեղաշարժող էր, որ երբ իրիկունը՝ եղբայրս, քոյրերս ու ես իր կաշիէ գոգնոցին վրայ կը նստեցնէր, մեր մօր գոգնոցին չափ կը սիրէինք անորն ալ:

Բ.

Յիրաւի հօրերնուս բարութեան պատճառով՝ մեր տունին մեծ դժբաղդութիւն մը պատահեցաւ: Օր մը եղբայրս, որ ինչ տարու մը մեծ էր, քարահանք իջած էր: Աշուն էր և օդը ցուրտ: Խեղճ տղան չոր պտերներէ պզտիկ կրակ մը շինած էր՝ իր փոքրիկ ձեռները բոցէն տաքցնելու համար: Հայրս ըսաւ անոր. « Կրատիէն, զգուշացիր որ սա իմ որսապարկիս քով թուղթին մէջ գտնուած սև փոշիին չի դաչիս, որովհետեւ երբ անիկա կրակին մօտեցունես, աչքիդ կը ցատքէ »: Բայց խեղճ տղան, որ երբեք մէկէ մը յանդիմանուած չէր, տեսնել ուզեց թէ՛ ատ սև փոշին ինչպէս աչքի կը

ցատքէ: Հօրս՝ իր պզտիկին սւշադրութիւն չըրած և բոլորովին գործին զբաղած ատենը, գնաց անկէ լեցուն ափ մը առաւ ան, և զայն կրակը նետեց, վառօդը ահագին բոց մը արձակեց և զայն կուրցուց: Ահա այս ժամանակէն սկսեալ, Կրատիէն չէր տեսնէր և հետեւաբար ինքնիրեն քալել, սակայն իր աչքերը առաջուան պէս գեղեցիկ ու փայլուն էին: Վառօդը մի՛ միայն իր տեսողութիւնն այրած էր: Կոյր մըն է ան չափ տի ըսէիք տեսած ատեննիդ, բայց ան միայն դուրսը արեգակին ու տունը՝ կրակին լոյսը կը տեսնէր: Հիւղակներուն համար մեծ դժբաղդութիւն մը եղաւ սա: Ամէն մարդ կուգար մօրս հետ ինքն ալ ցաւակցելու և իր արտասուքը մօրս արտանուքին խառնելու: Կրատիէն ա՛լ չէր կրնար ինքնիրեն քալել: Հայրերնիս, այս դժբաղդութեան պատճառաւ, այնքան վիշտ կրեց որ, սրտնեղութիւն մը ունեցաւ, ինչպէս կ'ըսեն այն երկրին մէջ, և ձմեռէն առաջ մեռաւ:

Գ.

Մայրս թէև մանկամարդ և գործաւորուհի, շատ նեղութիւն կը քաշէր մեզ սնուցանելու համար, և այր մարդու մը չափ՝ բրիչով, յօտոցով և կամ տրմուխով գործ կը տեսնէր: Ես, կոյր եղբայրս, կաթնկեր պզտիկ քոյր մը և երեսուն տարեկան կին մը, թէպէտև ժուժկալ, սակայն մէկ հացի շուրջ՝ շատ մը ակռաներ էինք: Շատ կը վշտանայի տեսնելով այս հէք կիներ որ տըրցակներ կը կտրէր, ու զանոնք կռնակը առած տուն կը սանէր. որ՝ հաճարը կը կըտրէր, մարդագետինը կը հնձէր, որաներ կը կապէր ու զանոնք կրակին առջեւ գաւազանով կը ծեծէր. որ հացը կը շաղուէր, կըրակը կը վառէր, ապուրը կ'եփէր, Կրատիէնին ձեռքէն կը բռնէր ու տակաւին պզտիկին կաթ կուտար: Ի լրումն այս դժբաղդութեանց, աւելցուցէք նաև տենդը, որ հիւղակներուն մէջ վարակեցաւ և յեսանիչը, իր կիներն ու տղաքը զոհ գացին անոր: Մի՛ միայն ինձ տարեկից աղջիկ մը մնաց անոնցմէ, Տընիդ անունով: Հաւկթածախը, զարհուրած այս հիւանդութենէն, որ մեծ վնաս մը հասցուցած էր հիւղակներուն, իր տան ատաղձներն ու կղմինտները քանդեց,

և գնաց եկեղեցիին մօտ, գիւղին ճամբաներէն մէկուն ծայրը, ուր առեւտուրը բանուկ էր, հոն նոր խանութով սենեակ մը հաստատեց: Տառնըմէկ կամ տասերկու տարեկան աղջիկ մը՝ միս մինակ իր մեռած ծընողացը տունը թողուլ՝ անկարելի էր: Մայրըս գնաց փնտռելու ու մեր տունը բերաւ: Յետանիչին թափուր տունը՝ ծիծեռնակներու և մողեսներու բոյն դարձաւ: Ամէն ձմեռ տակաւ կը խարխուլէր: Տընիզ, ամրան կիրակիները, մերթ հոն կ'երթար միայնակ, շագանակենիին տակը նստելու կամ ծանտափուշերէն կարմիր հատիկներ քաղելու, որ իր մօրը մանեակը կ'անուանէր և դրան սեմին վրայ կ'արտասուէր, ուր ո՛չ ոք կ'երթեւեկէր: Կրատիէն միշտ անոր կը հետեւէր, որովհետեւ մայրս ըսած էր՝ Տընիզի: «Երբ դաշտերն ըլլամ, այն ատեն քեզի կը յանձնեմ պզտիկ կոյրին պաշտպանութիւնը: Պիտի հսկես որ անդունդը չկ'յնայ ան»: Եւ այս երկու տղայք միշտ անբաժան էին իրարմէ:

Գ.

Այսքան աշխատութիւն, այսքան վիշտ և տունին այսքան բերաններն տեսնելով, ամօթ մը և ցաւ մը կ'զգայի ներսո: Մօրս ըսի. «Այս տարի հաճարին դաշտը վտիտ է, շագանակենիները՝ չունին շագանակ, հօրս գործնիւն ինծի տուէք»: Մայրս զանոնք վերստին տեսնելով՝ սկսաւ լալ: Գիւղակներն իջայ, ու ըսի. «Ո՞վ կ'ուզէ որ իրեն համար քար հանեմ: Մի միայն օրապահիկս հայթայթելու համար պիտի աշխատիմ»: — Ոմանք ինձ ըսին. «Քարահանք գնա՛, տեսնենք թէ հացիդ արժանի՞ ես»: Սկսայ միոյն և միւսին համար աշխատիլ: Եւ որպէս զի օրականներս չատնանք քանի մը տախտակներու վրայ կը պառկէի, որ ինձ փոխ տուած էին՝ ժայռին ցուրտին դէմ տաքնալու համար, կամ թէ՛ ախոսին կամ եզերուն գոմին մէջ դնելու: Միայն չարաթօրեցն հիւղակները կը վերադառնայի, և քիչ մը դրամը ու հացը, զոր շաբթուան մէջ շահած ու խնայած էի, մօրս կը բերէի:

Մայրս զիս կը գրկէր ու կ'ըսէր. «Ի՛նչ դժբաղդութիւն, որդե՛սկ իմ, զու՛ հօրդ հոգին ունիս, բայց չունիս անոր բազուկները»: Տընիզի և Կրատինէի հետ դաշտէն

լը կը պտըտէի, երբ մայրերնիս մեր փոքրիկ քոյրն կ'օրէր, կամ եգիպտացորենի հաստեակները կ'ընէր՝ կիրակի օրուան ապուր պատրաստելու համար: Այս վիճակը երեք չորս տարի տեւեց այսպէս: Եւ ուժովցայ, քարերը ինձ կը հպատակէին յարդի հողակոյտներու նման: Քարահանքէն միայն պատերու քար հանելով գոհ չէի ըլլար, այլ իմ գաղափարիս համեմատ սկսայ տաշել՝ դռներու ու պատուհաններու համար, մըրձաքանդակ և սրանկին, և նոյն իսկ հոն կը շինէի երբեմն, հարթաքանդակ վարդ մը կամ կակաչ մը՝ իրենց ցօղուններով ու իրենց բացուած տերեւներով միասին, հաւմը, աքաղաղ մը, կատու մը կամ շուն, այն քարին համեմատ՝ զոր յատկացուած էր պարտէզի մը, ախոսի մը, հաւնոցի մը, բակի մը կամ տունի մը սենեակի: Անօթութիւնը լաւ ուսուցիչ մ'է, մանաւանդ իր մօր, եղբայրներուն անօթութիւնը: Ուրիշ գործ չունէի, և սակայն գացէք քաղքին մէջ հոս, հոն հարցուցէ՛ք. «Ո՞վ տաշեց այս համբարանոցին քարը կամ այս աղաւնետան երդիքը»: Եւ ձեզ պիտի պատասխանեն. «Փոքրիկն Բլօտ՝ իր դուռովն ու իր դրթակով»: Քարէ նստարաններ ալ կը տաշէի, որպէս զի պառու կիները և տղաներն գիւղին մէկ անկիւնը երթան նստին, ու անոր վրայ ընտանիքին հօրը անունը կը փորագրէի, կամ թէ խճաքարեայ տաշեր՝ աղբիւրներու քով, ուրկէ արջառները ջուր խմելու կուգային. և հոն ալ կը գծագրէի իր խոշոր աչքերով և եղջիւրներով կով մը՝ որ խմլէն վերջ դուրս կ'ելլէր կարծես:

Թարգմ.

Ջոն Թ. Ա. Կ.



ԼՈՒՍԻՆԸ

ՊԱՐԶ ԱԶԳՈՎ ՏԵՍՆՈՒԱՄ

Միջոցին անհունութեան վրայ գաղափար մը ունենալու համար հեռադէտով մը Յարդգողի Ճամբան դիտելու է, նայելու է անկէ անդին գտնուած անհամար միգամածները՝ որոնց ամէն մէկը մէյմէկ Յարդգողներն են: Եւ մտածեցէք որ այս Ճամբաներուն մէջի ամէն մէկ պէտքուն կէտը արեգակ

մըն է իր միջորակներով ու արբանեակներով. ճիշդ մեր արեգակնային դրութեան պէս: Բայց ինչ հարկ կայ այնքան հեռուները երթալ. հոս, մեր մօտիկը, լուսինին վրայ պզտիկ հետազոտութիւն մը ընենք:

Լուսինին ու երկրիս հեռաւորութիւնը 96 հազար մղոն է միջին հաշուով, այն ալ գունտերուն կեդրոններէն հաշուելով, անանկ որ երկու աշխարհներուն մակերեւոյթին ամէնէն մօտ կէտերը իրարմէ 89 հազար մղոնի հեռաւորութեամբ մը միայն բաժնուած են. մեծ բան մը չէ ասիկա, և հիմակուան կատարելագործեալ դիտակներով, կարելի է մեր արբանեակին մակերեսի կազմուածքը մանրամասն քննել: Բայց չչափազանցենք. ամէնէն շատ մեծցնող հեռագէտը դիտուած գունդին տրամագիծը (5 հազար անգամէն աւելի չկրնար մեծցնել. այս պայմանով լուսինը կրնանք տեսնել մինչեւ 16 մղոն հեռուէն: Խնդիրը շատ մեծցնող հեռագէտ մը ձեռք ձգելուն վրայ չէ, ինչու որ լուսինը շատ փայլուն չլլալով, հեռագէտին մէջ կազմուած պատկերը որքան մեծ ըլլայ, այնքան ալ մութ ու անորոշ կը տեսնուի: Միւս կողմէ, մեր մթնոլորտը միշտ հանդարտ չըլլալով կարելի չէ բացարձակ յստակութեամբ պատկեր մը ստանալ:

Գրեթէ միշտ լուսինը բանաստեղծութեան մէջ աւելի մեծ դեր մը ունեցած է քան թէ աստեղագիտութեան մէջ: Քանի քանիներ ամաստեղ լոյսով գունազարդուած տեսարաններուն վրայ կ'սքանչանան աւանց մշտքերնուն անցներու թէ արդեօք ո՞վ է մեր դրացուհին:

Լրացած լուսնի սկաւառակին վրայի բիծերը՝ տարբեր կերպով կը բացատրուին. ոմանք մարդու դէմք մը նշմարել կը կարծեն, ուրիշներ՝ խալիլի մըն է կ'ըսեն, մինչդեռ կան ուրիշներ որոնք կը հաւատան թէ Յուդան է անիկա որ իր մեղքերը կը քաւէ: Վերջէն պիտի տեսնենք թէ ասոնք լեռներու շուքերէն յառաջ եկած են:

Ուրիշ դիտելի կէտ մը. լուսինը միշտ իր մէկ կողմը միայն կը դարձնէ երկրիս. ասիկա կը ցուցնէ թէ մեր արբանեակը երկրիս շուրջը դարձած ժամանակը՝ իր առանցքին վրայ ալ ճիշդ շրջան մը կը կատարէ պարզ օրինակով մը բացատրենք այս երեւոյթը. սենեակին մէջտեղ աթոռ մը դրէք եւ անոր

շուրջը դարձէք, միշտ աթոռին նայելով. դուք թէ ինքնիրեննուդ վրայ դարձած կ'ըլլաք և թէ աթոռին բոլորաթիւր. ձեր տեղը լուսինը երեւոյթեցէք և աթոռն ալ՝ երկրիւրը, այն ատեն հասկնալը դիւրին է:

Այս դիտողութիւններէն զատ, պարզ աչքով լուսինը դիտող մը պիտի տեսնէր որ երբ օդը խիստ պայծառ է, արբանեակին բոլոր լուսաւոր միջոցները կը փայլին առանց մէգի կամ շոգիի ետեւ ծածկուելով մթնցած երեւելու: Հեռագէտով ալ նայելով հաստատուած է այս երեւոյթին ճշդութիւնը: Ըսել է լուսինին կլիման մերինէն բոլորովին տարբեր է: Երբարեւ, նայինք առաջ թէ լուսինին վրայ գտնուող մէկը ի՞նչպէս պիտի տեսնէ երկիրը. — Յամաքները՝ իբր հաստատուն մարմիններ պիտի ցուցնեն լոյսը և փայլուն պիտի տեսնուին, մինչդեռ ծովերն ու ովկէանոսներն մութ կէտերու պէս պիտի երեւին. արդ, մեր մթնոլորտը միշտ ամպոտ ըլլալով, այս մութ ու փայլուն կէտերը պիտի ծածկուէին ու բացուէին, եւ թէ երկրիս մակերեւոյթին վրայ լուսինին մէջէն դիտողին տեսած բիծերը միշտ տեղ պիտի փոխեն: Քանի որ մեր արբանեակին մակերեսին վրայ ասանկ երեւոյթներ չենք նշմարեր և թէ ընդհակառակն, անոր տեսքը միշտ ջինջ ու անփոփոխ է, ըսել է լուսինին մթնոլորտին մէջ ամպ չկայ: — Հոս քանի մը հարցումներ կուգան ինքնին. ինչո՞ւ համար լուսինին մթնոլորտին մէջ ջրաշոգի չգտնուիր, արդեօք շատ քիչ քանակութեամբ կը գտնուի՝ անբաւական ամպ մը կազմելու. թէ ոչ լուսինին վրայ բնաւ ջուր չգտնուիր:

Լուսինին մթնոլորտը՝ եթէ ունի, այնքան անօսը է որ արեւուն ճառագայթները առանց խոտորելու կ'անցնին անոր մէջէն և ուղղակի գունտին մակերեսին վրայ կ'իյնան: Այս անօսը մթնոլորտը խիստ թեթեւ է եւ ամէնամիտքը ճնշում մը հազիւ կ'ընէ լուսինին մակերեւոյթին վրայ, մանաւանդ որ լուսինին մէջ ծանրութիւնը՝ երկրիս վրայ եղածէն (5 անգամ աւելի քիչ է: Աւելցուցէք ասոր թէ ամբողջ լուսնային օրեր (որոնց իւրաքանչիւրը մեր ժամով 354 ժամ տեւողութիւն ունի) արեւը իր տաքութիւնը թափելով արբանեակին վրայ, եթէ անոր երեսը ջուր կամ ծով գտնուէր, շուտով շո-

գիտնալով ամպեր պիտի ձեւացնէին. մինչ-
դեռ ամպ բնաւ չկայ հոն, ուրեմն կրնանք
ընդունիլ որ լուսինը բնաւ մթնոլորտ չունի
եւ կամ ունեցածն ալ խիստ սահմանափակ է
ու իր մակերեսին վրայ բնաւ ջուր չկայ:

Ահա ինչ որ ամէնքս ալ կրնանք տեսնել
պարզ աչքով՝ լուսինին վրայ:

ԱՄԷՏԷ ԿԻՅԸՄԷՆ

Ֆրանս. Գիտական Կաճառէն

(Յաջորդ թիւով՝ Լուսինը՝ Հեռագիտակով)



Գ Պ Ր Ո Յ Ա Ս Է Ր Տ Ղ Ա Ն

Առաւօտուն շուտ կը զարթիմ գիշերանց
եւ անկողնէս վեր կը ցատկեմ սրաբաց,
Կը լուացուիմ եւ կը հագուիմ շաւ արագ
Ձիս կը սիւրէ, մայրս դօշմէ հակսիս պագ:

Մամա խնդրեմ տուր գրեթէ ուս պայուսակ
Փութով երթամ դպրոց առնում մեցանակ,
Ընկերներս դեռ պառկած են անկողին
Նոքա վերջ գան առնուն պատիժ ապսակին:

Ես վազելով հանապարհէն շուտ կ'անցնիմ
Ու ծանօթիս հետ խօսելու չըստիպուիմ,
Շուտ կը մտնեմ վարժարանի սեմէն ներս,
Իմ դարակս շուտով կը գտնեմ փութկոտ ես:

Օրուան դասերս ուշադրութեամբ կը կրկնեմ,
Մաքուր յստակ պատմելու ձեւ կը փնտռեմ,
Երբ դասասուս խոժոռ դիմօք ներս մտնեմ
Նա ուրախ դասերս պատրաստ քող գտնեմ:

Մ. Ն.



Այն մարդն որ կը գողնայ միայն մէկ
ստակ, իւր խղճին դէմ այնքան յանցապարտ
պիտի ըլլար՝ եթէ գողնալու ըլլար հազար
ոսկի:

— Աղքատի համար չբացուող դուռը՝ պի-
տի բացուի բժիշկի համար:

Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Ա Վ Ե Ր Ն

ՈՒՂՆԵՐՈՐՈՒԹԻՒՆ

ԴԷՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 24րդ թիւէն)

Դիտակս առի եւ սկսայ ծովին երեսը
լաւ մը դիտել. գուցէ, կը մտածէի, ջրային
զեւուներէ հատի մը կը հանդիպիմ. բայց
բան մը չտեսայ: Օդն ալ ամայի էր. ինչո՞ւ
համար արդեօք Գիւլիէի վերակազմած թռ-
չուններէն քանի մը տեսակները չէին ապ-
րեր. ծովուն ձուկերը պիտի բաւէին անոնց
իւր սնունդ:

Երեւակայութիւնս վառուած էր հնաբա-
նական ենթադրութիւններով. արթուն կ'ե-
րագէի: Ջուրերուն վրայ կը կարծէի տես-
նել chersseiterները, նախաջրհեղեղեան կրի-
այներ՝ որոնք շարժուն կզգին երբ կը նմա-
նին: Մթնած ծովեզրերուն մէջէն կ'անցնին՝
առաջին օրերու ահագին ստնաւորները.
Léptotheriumը՝ որու ոսկորները առաջին ան-
գամ Պրազիլիոյ մէջ գտնուեցաւ. Méricot-
theriumը՝ զոր Սիպերիոյ սառույցներուն մէ-
ջէն բերին, հոկայ թափիր մը կը պահու-
տի ժայռերուն ետին՝ Anoptotherium մը որ-
սը խլելու ձեռքէն. այս վերջինը զարմա-
նալի կենդանի մըն է որ ռեպեղչիւրի, ձիու,
գետաձիի եւ ուղտի կը նմանի. կարծես՝ Ա-
րարիչը՝ ստեղծագործութեան առաջին օրե-
րուն աճապարելով քանի մը տեսակ կենդա-
նիներ ի մի բերելով, հատ մը միայն շինած
է: Հոկայ պտկածանին՝ պատիճը կը տարա-
ծէ եւ ահագին ժայռեր կը խորտակէ, մինչ-
դեռ մեծագազանը՝ խոշոր թաթերուն վրայ
կծկտած՝ դետինը կը փոքրիկ եւ սոսկալի
մունչիւններովը արձագանքը կը դղրդեցնէ:
Քիչ մը անդին առաջին կապիկը ցից ժայ-
ռերու գագաթները կը մագլցի: Աւելի ան-
դին, մաշկառնաւոր՝ հոկայ ջղջիկի մը պէս
օդին մէջ կը սահի: Վերջապէս ամէնէն հե-
ռուն ահագին թռչուններ, գազուարէն ա-
ւելի զօրաւոր, ջայլամէն շատ աւելի մեծ,
խոշոր թեւերնին կը բանան եւ կրանիթէ

կամարներուն դարձուցնելով կը թռչտին:

Ամբողջ այս բրաժոյ աշխարհը կը վերածնէր երեւակայութեանս մէջ: Աստուածաշունչի ստեղծագործութեան դարերուն մէջ կզգամ ինքզինքս՝ երբ երկրին երեսը պէտք եղածին չափ կազմուած չըլլալով՝ մարդս չէր կրնար տակաւին գոյութիւն ունենալ:

Երազս՝ կենդանի էակներուն երեւման տարիէն ալ աւելի առաջները կ'երթար. ստնաւորները կ'աներեւոյթանային, յետոյ թռչունները, յետոյ երկրորդական դարու սողունները, և վերջապէս ձուկերը, խեցեպատեանները, թռչաւորները: Ամբողջ կեանքը իմ մէջս կ'ամփոփուէր, և իմ սիրտս բոլոր այս ամայի աշխարհին վրայ մինակն էր փափախողը: Ո՛չ տարիի եղանակ կար, ո՛չ կլիմա. երկրիս յատուկ ջերմութիւնը երթալով կ'աւելնար եւ արեւուն տաքութիւնը կը չեղաքացնէր: Բուսաբերութիւնը հսկայ երեւոյթ մը կ'առնէր, ծառաբերձ պտերներուն մէջտեղէն շուքի մը պէս կը սահէի. խայտապտուն խճաքարերու վրայ կը քայլէի, ահագին կոնարերերու կոճղին կը կռթնէի. հարիւր ոտք բարձր ոստիսաներու շուքին տակ կը քնանայի:

Դարերը՝ օրերու պէս կանցնին. երկրիս ձեւափոխութիւններու շրջաններէն կ'անցնիմ. բոյսերը կ'անհետանան. կրանիթէ ժայռերը կը կորանցնեն իրենց կարծրութիւնը. աւելի սաստիկ ջերմութեան մը ազդեցութեան տակ հաստատուն վիճակը տեղի կուտայ հեղուկ վիճակին առջեւ, ջուրերը կը ծածկեն ամբողջ երկիրս, կ'եռան, կը շոգիանան, շոգիները կը ծածկեն երկիրս՝ որ կամաց կամաց կազային գունտի մը կը փշուռի, մինչեւ ձերմակ բարեխառնութիւն տաքացած, արեւու պէս խոշոր ու փայլուն:

Այս միգամածին մէջտեղը՝ որ ետքէն կազմելիք գունտէն մէկուկէս միլիոն անգամ աւելի մեծ է՝ կը քշքշուիմ մոլորակային միջոցին մէջ:

Մարմինս կ'անէանայ եւ անհունութեան մէջ լուսաշող ճամբայ մը գծող այս անհուն շոգիներուն կը խառնուի՝ իբր անկշռելի հիւլէ մը:

Ի՞նչ երազ. ուրտեղները կը տանի ինծի. ա՛լ ամէն բան մոռցեր էի, դասախօսը, առաջնորդը, լաստը: Զգայախաբուծիւն մը գրաւեց միտքս...

— Ի՞նչ կ'ըլլաս կոր, ըսաւ հօրեղբայրս: Աչքերս բացած իրեն նայեցայ, առանց տեսնելու:

— Ուշադրութիւն ըրէ՛, Աքսէ՛լ, ծովը պիտի իյնաս:

Մի և նոյն պահուն, Հանսի հոժկու ձեռքը բռնեց ինծի. ապա թէ ոչ երազիս ազդեցութեան տակ՝ ծովը պիտի գլորէի:

— Խենդեցա՞ւ, ի՞նչ եղաւ, գոչեց հօրեղբայրս:

— Ի՞նչ կայ, ըսի վերջապէս, ինքզինքիս գալով:

— Հիւա՞նդ ես:

— Ո՛չ, վայրկեան մը զգայախաբուծիւն ունեցայ. բայց անցաւ: Ամէն բան յաջող կ'երթայ կոր:

— Այո՛, աղուոր հով կայ. ծովը հանդարտ է. արագ արագ կը յառաջանանք: Եթէ այսպէս շարունակէ, շուտով ցամաք պիտի հասնինք:

Ելայ հորիզոնը դիտելու, բայց միշտ ջուրը երկինքին միացած գիծը կը տեսնուէր միայն:

ԼԳ.

Շաբաթ, 15 Օգոստոս

Ծովը իր միօրինակութիւնը կը պահէ միշտ. բնաւ ցամաք մը չտեսնուիր: Հօրեղբօրս բարկութիւնը նորէն բռնել սկսաւ. բոլոր գլխուս եկած վտանգները՝ հազիւ մարդասիրութեան կայծ մը եղած էին իրեն. հիմա որ ամէն բան հանգիստ էր, նորէն իր բնութիւնը վերստացաւ:

— Մտաւտանջ կ'երեւիք, հարցուցի:

— Ո՛չ, համբերութիւնս հատաւ:

— Սակայն շատ արագ կ'երթանք...

— Ի՞նչ հոգս. արագութիւնը չէ որ քիչ է, հապա ծովն է որ շատ ընդարձակ է:

Միտքս եկաւ որ մեկնած օրերնիս՝ հօրեղբայրս կ'ըսէր թէ մէկ օրէն կարելի էր անցնիլ այս ծովէն:

— Չենք վար իջներ կոր, յարեց դասախօսը, և ասի ժամանակի կորուստ է:

— Բայց, ըսի, Սաքսիւսէմի ցուցուցած ճամբուն հետեւեցանք մենք:

— Խնդիրը հոտ է. իր հետեւած ճամբէն եկանք, Սաքսիւսէմ այս ծովուն հանդիպեցա՞ւ, անոր վրայէն անցա՞ւ, առաջ-

նորդ բռնած գետերնիս մեզ չխաբե՞ց :

— Ինչ ալ ըլլայ, հոս գալերնուս զղջալու չենք: Տեսէ՛ք, ինչ սքանչելի տեսարան եւ... :

— Խնդիրը տեսնելուն վրայ չէ. ես ինձ նպատակ մը որոշեցի, պէտք է որ հոն հասնիմ. ա՛լ մի խօսիր սքանչանալու վրայ :

Չպատասխանեցի. իրիկուան դէմ, Հանս իր շարաթականը գրողանեց եւ ճաշեցինք :

նի մը ծայր կապելով ջուրին մէջ ձգեց, եւ որչափ այս նորօրինակ խորաչափին չընունը կը թողուր, այնքան վար կ'երթար. առանց գետնի մը հանդիպելու: Երբ խոշոր բիրը վեր քաշեցինք, վրան ճգմուածներ երեւան ելան. կարծես թէ երկու կարծր մարմիններու մէջ սեղմուած էր: Հանս մատով ցուցնելով այս նշանները « Թէնաէր » ըսաւ, կզակը սյոժով մը բանալ գոցելով :



Կիբակի, 16 Օգոստոս

Նոր բան մը չկայ. օդը փոխուած չէ, Ամէնէն մեծ վախս՝ ելեքտրական լ ոյսին դադրելովը նորէն խոր մութի մէջ թաղուելնիս է. բայց հիմակուհիմայ ատանկ բան մը չտեսայ: Ծովը շատ ընդարձակ կ'երեւի. վեռ ցամաք մը չկրցանք նշմարել: Անգամ մը հօրեղբայրս ծովին խորութիւնը չափել ուզեց. ծանր երկաթէ բիր մը երկար չուա-

— Ակռանե՛ր, գոչեցի զարմացած, ու սկսայ աւելի ուշադրութեամբ դիտել :

Իրա՛ւ, ակռաներու հետքեր էին որոնք մետաղին մէջ դրօշմուած էին: Որչափ ուժով ըլլալու էին արդեօք այդ ակռաները կրող կզակները :

Երկուշաբթի, 17 Օգոստոս

Կը ջանամ միտքս բերել յատուկ բնազդ-

ները երկրորդական դարու այս անդրջրհեղեղեան կենդանիներուն, որոնք կակղամորթներէն, խեցեպատեաններէն, ձուկերէն ետքը եկան, եւ որոնց յաջորդեցին ցամաքի ստնաւորները: Այն ատենները՝ երկկիրս ամբողջ սողուններուն կը պատկանէր. բնութիւնը ի՞նչ հսկայ կազմուածք, ի՞նչ սոսկալի ոյժ մը պարգեւած էր ժելրաեան ծովերու այս բնակիչներուն: Ո՛չ մէկ մարդկային աչք ողջ տեսած է այս կենդանիները. ասոնք՝ մարդուս երկրի վրայ երեւնալէն հազար դար առաջ կ'ապրէին. բայց իրենց բրածոյ ոսկերոտիները գտնուելով լիա կոչուած կաւային կրաքարերու մէջէն՝ կարելի եղած է անոնց մարմինը վերակազմել եւ հսկայ ձեւերին ճանշնալ: Համպուրկի միւզէնին մէջ հատ մը կար ասոնցմէ որ երեսուն ոտք երկայն էր:

Կարծեմ հօրեղբայրս ալ ահաւայի հետքերը քննելէն ետքը, ինծի պէս՝ վախցաւ որ այդ հրէշներէն մին դէմերնիս չիլէ, որովհետեւ խածատուած երկաթը տեսնելէն ետքը սկսաւ ուշադրութեամբ ծովին երեսը դիտել:

Արդէն սկսաւ լայն ալիքներ կազմուիլ ծովուն երեսը, որոնք ջուրին յատակը եղած չարժուո՞մը կը ցուցնեն:

Նեիեաբբի 18 Ognus.

Իրիկուան, հազիւ երկու ժամ քնացեր էինք, երբ սոսկալի ցնցումէ մը արթնցայ. լատը՝ ջուրէն վեր վերցուելով մինչեւ 20 ձողաչափ անդին նետուեցաւ:

— Ի՞նչ կայ, պուստ հօրեղբայրս ցամաք հասանք:

Հանս՝ 200 ձողաչափ հեռուն սեւ բան մը ցցուց որ ջուրը կը մտնէր ու դուրս կ'ելլեր շարունակաբար. աղէկ մը դիտելէ ետքը ըսի.

— Ծովախոզ մըն է:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս. հիմա ալ խոշոր մողէս մը ելաւ:

— Անդին ալ հսկայ կոկորդիլոս մը. կը տեսնէ՞ք ահագին կզակն ու ախաւները: Ա՛հ, անհետացաւ:

— Պալենա՞ մը, գոչեց հօրեղբայրս, լուղակները կը տեսնեմ կոր. նայէ՛, քթարողքէն որչա՞փ օդ ու ջուր դուրս կուտայ:

Այս վտանգաւոր կենդանիներէն ժախչելու համար Հանս ղէկը դարձեւելու վրայ էր երբ լատին միւս կողմը նշմարեցինք ուրիշ կենդանիներ՝ որոնք միւսներուն չափ սոսկալի էին. քառասուն ոտք խոշոր կրկայ մը եւ երեսուն ոտք երկայն օձ մը՝ որու գլուխը ջուրէն վեր կը ցցուէր:

Փախչիլ անկարելի էր. մէկ կողմէ կոկորդիլոսը՝ իսկ միւսէն օձը կը յառաջանէ. մնացեալ կենդանիները անհետացած են, երկուքն ալ քանի մը անգամ կը դառնան լատին չուրջը եւ յանկարծ՝ վայրաջարժի մը արագութեամբ սուրալով իրարու վրայ կը յարձակին: Հիմա կարծես թէ միւս բոլոր կենդանիները եկեր կռիւին կը կը մատնակցին. ծովախոզը, պալենան, մողէսը, գորտը: Մատովս Հանսի ցցուցի:

— Թ՛վա՛, ըսաւ:

— Ի՞նչ, երկու կենդանի՞ են միայն կըուտոյներն:

— Այո՛, պատասխանեց հօրեղբայրս, որ դիտակով հետեւած էր այս մարտին. այս դաղաններէն մին՝ ծովախոզի դունչ, մողէսի գլուխ, կոկորդիլոսի ախաւս ունի. սոսկիայ ձկնամողէսն է:

— Հապա միւսը՞:

— Միւսը՝ կրկայի պատեանի տակ ծածկուած օձն է, առաջինին սոսկալի թշնամին, մերձամողէսն է:

Իրաւ էր, երկու կենդանիներ միայն կը կուէին ալիքներուն վրայ. Ջուրի ահագին սխնակներ վեր կը ցատքեցնէին եւ քան անգամէն աւելի քիչ մնաց լատը ընկովէր, Ամենաստատիկ սուլումներ կը լսուէին եւ երկու գազան իրար ժաթթուած կը տալլուէին: Մէկ ժամ, երկու ժամեր անցան առանց կռիւի քիչ մը մեղմանալու. քանի մը անգամներ երկու մարտիկները՝ լատին մօտեցան ու հեռացան. պատրաստ կեցեր էինք կրակ ընելու վրանին, բայց ի՞նչ ազդեցութիւն կրնար ունենալ հրացանի զնտակ մը անոնց պողպատի չափ ամուր պատեանին վրայ:

Յանկարծ ձկնամողէսն ու մերձամողէսը ջուրերուն յատակը սուզեցան, ալիքներուն մէջ ահագին յորձանք մը յառաջ բերելով՝ կռիւը կը շարունակուէր ծովին տակ:

Քիչ վերջը մերձամողէսը երեւցաւ ջուրերուն երեսը. մահացու կերպով վիրաւոր

ուած էր. ա՛լ կրիայի մարմինը չէր երեւէր, մինակ ահագին վիզը կէս մը վեր բարձրացած էր ու կտրած որդի մը պէս կ'ոլորտկ'ր, Հոգեվարքի սաղնապը քիչ տեւեց, և ահագին կենդանին ջուրին մէջ սուզեցաւ անշարժ իրի մը պէս:

Ի՞նչ եղած էր ձկնամուղէսը, արդեօք նորէն պիտի երեւէ՞ր:

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդավուր Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պօղոսեան Աֆիոնի-արահիսար, Աշոտ էֆ. Պազպաղեան Երոսկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան Թէֆրսաղ. Ասատուր էֆ. Արտէնեան Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Կիւրին, Միսաք էֆ. Խանդավուր Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւրպէնիեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ալաբեան Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքարեան Սրվաթ, Միհրան էֆ. Իսպիրեան Սիւսիսի Էոյ Ա. էֆ. Կ. Կիւրպէնիեան Վեզիր Էօբրի » » » Տիարաէֆր. Լեոն էֆ. Սրապեան

ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՅԱՐԱՐԴԵՐՈՒ

ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուով 100 հատը	7 »
Երկու » » » » »	9 »
Երեք » » » » »	11 »
Մէկ » ընտիր » » »	8 »
Երկու » » » » »	10 »
Երեք » » » » »	12 »
Ոսկեզօծ եզերքներով ընտիր թուով	16 »
» » » » »	17 »
» թրթրլը եզերք. ճերմակ »	17 »
» » » » »	18 »
Թուրքերէն Սիւրիս, Թաալիք եւ Բըզզա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝	12 շրշ.
աւելի ծախք մը վճարել պէտք է:	
Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը	60 շրշ.

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուր: Վճարմունք կանխիկ են:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Երզնկա, Պ. էֆ. Ա. — Ստացանք նամակնիդ, շնորհակալ ենք: — Մեր զրքերուն ցանկը ներկայ թիւին մէջ հրատարակուած է:

Թորաթ, Խ. էֆ. Թ. — Յանձնարարութիւննիդ զրկուեցաւ:

Մարաշ, Տ. Ն. քհ. Շ. — Ստացանք, շնորհակալ ենք: Յանձնարարութիւննիդ հետգնետէ կը կատարուին: — Իր հասցէին զրկուեցաւ:

Աֆ. Գարահիսար, Ա. էֆ. Պ. — Ստացանք, շնորհակալութիւն, գատ նամակ կ'ընդունիր:

Թէքիրտաղ, Ա. էֆ. Ա. — 6 եւ 11 թիւերը պակաս են, մնացեալները զրկեցնք:

Մարզուան, Ա. էֆ. Կ. — Ստացանք, շնորհակալ ենք:

Սըվազ, Մ. էֆ. Ի. — Ստացանք, շնորհակալ ենք. յանձնարարութիւննիդ զրկուեցաւ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » » » »	4
Մաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ ֆերական	2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրադիստութեան	
Ամրոզական դասընթացքը	
Մաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Սուրբ Երկիր կամ Տեղագրութիւն Ս.	
Երուսաղէմ (պատկերազարդ)	10
Տօնակար, Հոյ. Ա. Եկեղեցոյ	12
Բրիտանական (Ս. Եփեսեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Գաղղիացար, Տիկին (Նոր տղադրութիւն)	6
Բուրատտոն Մանկանց (Տարեկանը)	10
Աղբիւրայիրք	10

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տարակ թղթակցութեան համար գիւնը մ'նակ տոյն հասցէին

شاه بربريان مطبعه

استابل باب الى جا

ՆՇԱՆ Կ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ - ՀՐԱՏՈՐԱԿԻՉ

Կ. Պալիս Պապ-Ալի Ճասսեսի րիւ 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Շրջ. Լ. Իրդ. Թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու շնորհ ընեն:

ԽՄԱԳՐԱՊԵՏ - ԱՐՏՈՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԱՌԱՍԵՆՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ - ՀՐԱՏՈՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի Ճասսեսի, Թիւ 38, Իզմամ լրագրի դէմ

[illegible]

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻՒ ՅՏ. ԻԳՏԱՐ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպազրէ ամեն
սեսակ գիրքեր, ման-

ազդեր, հանդէսներ, օրգաբերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-
ցաբարդեր, եւ սպագրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական
20000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմեղելի մաքրութիւն եւ նշանաւորութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն սեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ զրկել Խմբագրութեանս, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ
ասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանութեամբ
գոհացում տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հառտատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա ժ Ա ՚ Ն

Ա ժ Ա ՚ Ն

Ա ժ Ա ՚ Ն